



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2025 թվականի N 240 -Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԵՐԳՈ ՊԵՏՐՈՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ԱՐԵՎԻԿ ԶԱՎԵՆԻ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ, ԱՆՆԱ ՍԵՐԳՈՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ԱԼԻՆԱ ՍԵՐԳՈՅԻ
ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ, ԱՐՏՅՈՄ ՍԵՐԳՈՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱԼԲԵՐՏ ՍԵՐԳԵՅԻ
ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՈԳՀՈՎԻՏ
ԲՆԱԿԱՎԱՅՐ, 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ, 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 1 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ
(ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-034-0018-0007) ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի բ) ենթակետի դրույթով և հիմք ընդունելով 2025 թվականի հուլիսի 30-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած Սերգո Ավետիսյանի դիմումը 08-034-0018-0007 կադաստրային ծածկագրով՝ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 29052018-08-0035) հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության՝ 38.30 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 11.51 քառակուսի մետր արտաքին մակերեսով նախամուտքը օրինականացնելու վերաբերյալ և հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված է ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, **ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2022BFLMY3 ծածկագրով**, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գոգիովիտ բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-034-0018-0007/ Սերգո Պետրոսի Ավետիսյանին, Արևիկ Զավենի Հովակիմյանին, Աննա Սերգոյի Ավետիսյանին, Ալինա Սերգոյի Խուրշուդյանին, Արտյոմ Սերգոյի Ավետիսյանին եվ Ալբերտ Սերգեյի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.1000 հա մակերեսով հողամասի վրա 2021 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո) ինքնական կառուցված՝ 38.30 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության օժանդակ շինությունը և 11.51 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության նախամուտքը ճանաչել օրինական:
2. Շինությունների օրինականացման համար սահմանված վճարը կազմում է 16020 (տասնվեց հազար քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Պարտավորեցնել հողի սեփականատիրոջը սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքը ենթարկել պետական գրանցման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի հուլիսի 30
գյուղ Աշոցք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2025 թվականի N 241 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԳՈԳՀՈՎԻՏ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 08-034-0119-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,13089 ՀԵԿՏԱՐ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼՔԵՐՏ ՍԵՐԳԵՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 19-ի թիվ 24-Ա որոշումը և Ալբերտ Սերգեյի Ավետիսյանի 2025 թվականի հուլիսի 30-ի դիմումը. որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (բնակավայր Գոգհովիտ) սեփականությունը հանդիսացող, 08-034-0119-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված գյուղատնտեսական նշանակության 0,13089 հեկտար 2-րդ կարգի արոտը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության քաղաքացի՝ Ալբերտ Սերգեյի Ավետիսյանին (անձնագիր՝ AS0374764, տրված՝ 20.09.2018թ., 034-ի կողմից) և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով

2. Որոշման 1-ին կետում նշված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի ~~բառակազմը~~ կցվում է որոշմանը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 օգոստոսի 2025 թվականի N 242-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՇՈՑՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին, 6-րդ և 10-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1.1-ին մասով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը թափուր է՝ **որոշում եմ.**

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի սեպտեմբերի 4-ին անցկացնել մրցույթ՝ համաձայն հավելվածի:
- Մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը սահմանված կարգով հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային «<http://www.azdarar.am>» և համայնքի պաշտոնական համացանցային «www.ashotsq.am» կայքերում, ինչպես նաև դրանք փակցնել համայնքապետարանի տեղեկատվական ցուցատախտակին:
- Թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթ

h/h	Թափուր պաշտոնի անվանումը	Աշխատանքային լիազորություններ և պարտականություններ	Տվյալ պաշտոնը զբաղեցնողի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջներ	Որակավորման պահանջներ	Պահանջվող փաստաթղթերը
1.	<p style="text-align: center;">Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Աշոցքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-Ի տնօրեն</p>	<p>Տնօրենը՝</p> <ol style="list-style-type: none"> 1) որոշում է հաստատության գործունեության ռազմավարությունը, զարգացման նպատակներն ու խնդիրները, ընդունում որոշումներ այդ աշխատանքների ծրագրային պլանավորման համար. 2) իրականացնում է հաստատության ընթացիկ կառավարումը և ղեկավարումը, ուսումնադաստիարակչական, վարչատնտեսական աշխատանքները հաստատության կանոնադրության և այլ իրավական ակտերին համապատասխան. 3) ապահովում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված կրթական ծրագրերի իրականացումը. 4) կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության, կրթական գործընթացի կազմակերպման, կրթական ծրագրերին համապատասխան՝ տարեկան ուսումնական ժամանակացույցի կազմման համար. 5) կրում է պատասխանատվություն ներքին կարգապահական կանոնների մշակման և ներդրման համար, սաների և աշխատողների իրավունքների և 	<p>Տնօրենի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին. 2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝ <p>ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին», «Տեսչական մարմինների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական</p>	<p>Հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա՝</p> <ol style="list-style-type: none"> 1) բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի կամ հանրային ծառայության ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր): 	<ol style="list-style-type: none"> 1) դիմում 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ) 3) անձը հաստատող փաստաթուղթ 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում) 5) ինքնակենսագրություն 6) մեկ լուսանկար 3x4 չափի. 7) Տեղեկանք բնակության վայրից, 8) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող

		<p>ազատության պահանջան համար.</p> <p>6) ձևավորում է սաների տարիքային խմբերի համակազմը՝ հաստատության կանոնադրության և Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի պահանջներին համապատասխան.</p> <p>7) խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը, աջակցում կոլեկտիվում բարենպաստ բարոյա հոգեբանական մթնոլորտի ձևավորմանն ու պահպանմանը.</p> <p>8) ստեղծում է անհրաժեշտ պայմաններ աշխատողների մասնագիտական զարգացման համար.</p> <p>9) կազմակերպում է կրթական գործընթացի մեթոդական, նյութատեխնիկական հագեցվածության ապահովումը՝ սահմանված նորմատիվների պահանջներին համապատասխան.</p> <p>10) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.</p> <p>11) պլանավորում, համակարգում և վերահսկում է հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների մանկավարժական և այլ աշխատողների աշխատանքը.</p> <p>12) ապահովում է արդյունավետ համագործակցություն համայնքի, հասարակական կազմակերպությունների, ծնողների (սաների օրինական ներկայացուցիչների) հետ.</p> <p>13) համագործակցում է մշակութային կենտրոնների հետ (թատրոններ, թանգարաններ, գրադարաններ) սաներին ազգային և համամարդկային մշակութային տարրերին հաղորդակից դարձնելու նպատակով.</p> <p>14) համագործակցում է դպրոցների հետ՝ դեպի դպրոց սաների սահուն անցումն ապահովելու նպատակով.</p> <p>15) ապահովում է կրթության և</p>	<p>օրենսգիրքը, մրշական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.</p> <p>բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները:</p>		<p>փաստաթուղթ 9) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.</p> <p>10) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)</p> <p>11) Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝</p> <p>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ</p> <p>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից</p> <p>3) տառապում է «Կառավարության կողմից այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.</p> <p>4) դատապարտվել է հանցագործության</p>
--	--	--	---	--	---

		<p>զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սանի անհատական ուսուցման և զարգացման պլանով սահմանված խելամիտ հարմարեցումների առկայությունը.</p> <p>16) ապահովում է հիմնադրի կողմից հատկացված և այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը.</p> <p>17) կրում է հաստատության՝ սննդի կազմակերպման, կիրառման և ճաշացանկի մշակման պատասխանատվությունը.</p> <p>18) լուծում է վարչական, ֆինանսական, տնտեսական և հաստատության բնականոն գործունեությունն ապահովող հարցեր.</p> <p>19) սահմանված կարգով աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքներ և կարգապահական տույժեր.</p> <p>20) ապահովում է աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պաշտպանությունը, ուսումնանյութական բազայի, սանիտարահիգիենիկ կանոնների, հաստատությունում գործածության ենթակա փաստաթղթերի պահպանությունը.</p> <p>21) ապահովում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, հիմնադրի, հանձնարարականների կատարումը.</p> <p>22) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.</p> <p>23) համայնքի ղեկավարի և ավագանու (հիմնադրի) որոշումներով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում</p>			<p>համար, և սահմանված կարգով՝ հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:</p>
--	--	---	--	--	---

		<p>Ֆինանսական միջոցները.</p> <p>24) տալիս է հաստատության անունից հանդես գալու, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.</p> <p>25) բանկերում բացում է հաշվարկային հաշիվ.</p> <p>26) իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.</p> <p>27) ապահովում է ներքին կարգապահական կանոնների պահպանումը, աշխատողների անվտանգությունը և առողջության պահպանումը.</p> <p>28) կազմում և համապատասխան լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը.</p> <p>29) ապահովում է պայմաններ՝ հաստատությունում ճիշտ գործավարության իրականացման, դիդակտիկ նյութերի նպատակային և արդյունավետ օգտագործման, սարքավորումների պահպանման, տեխնիկայի անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերի ու կանոնների համար:</p>			
<p align="center">Մրցույթներն անցկացնելու օրը, ժամը, վայրը</p>		<p align="center">Փաստաթղթերի ընդունումը</p>			<p align="center">Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը</p>
<p>Օրը՝ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին, Ժամը՝ 11:00-ին: Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարան: Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Հրապարակ 1, հեռ. 094264735, 094823655:</p>		<p align="center">Փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարան (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Հրապարակ 1, հեռ. 094264735, 094823655, 077273788 Կամ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչություն (հասցեն՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, 1-ին հարկ, հեռ. 0312 4-90-00*147) Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի</p>			<p align="center">2025 թվականի օգոստոսի 21-ը ներառյալ</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԳ



Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2025 թվականի N 243 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՇՈՑՔ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 1-
ԻՆ ԱՆՑՈՒՂԻ, 1/1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
0.0043 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 08-015-0045-0054 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐԹՈՒՐ ՍԵՐԳԵՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Արթուր Սերգեյի Սարգսյանը դիմել է (դիմումը մուտքագրված է Աշոցքի համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 18-ին, մտից թիվ 1111-ով) Աշոցք համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք 1-րդ փողոց, 1-ին անցուղի, 1 առևտրի կետ հասցեում, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11042025-08-0021 վկայական) հողամասին հարակից՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, 1-ին անցուղի, 1/1 հողամաս հասցեում գտնվող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00430 հեկտար մակերեսով համայնքապատկան հողամասն (վկայական N 26062025-08-0001) առևտրի կետի պահպանման ու սպասարկման տարածքի ընդլայնման համար ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերի պահանջներին համապատասխան՝ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի

մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերը և հիմք ընդունելով Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 01-ի 51-Ա որոշումը, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, 1-ին անցուղի, 1/1 հողամաս հասցեում գտնվող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00430 հեկտար մակերեսով համայնքապատկան 08-015-0045-0054 կադաստրային ծածկագրով հողամասը (վկայական N 26062025-08-0001), հողի կադաստրային արժեքով՝ 6110 (վեց հազար հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Արթուր Սերգեյի Սարգսյանին՝ առևտրի կետի պահպանման ու սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑԷ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**



2025 թվականի օգոստոսի 04
գյուղ Աշոցք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2025 թվականի N 244 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՇՈՑՔ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ,
10/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
0.055096 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 08-015-0066-0085 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԻՍԱԿ ՇԱՀԵՆԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Միսակ Շահենի Համբարյանը դիմել է (դիմումը մուտքագրված է Աշոցքի համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 07-ին, մտից թիվ 1045-ով) Աշոցք համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք 5-րդ փողոց, 10/1 հարթակ հասցեում, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14022025-08-0051 վկայական) հողամասին հարակից՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, 10/2 հողամաս հասցեում գտնվող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.055096 հեկտար մակերեսով համայնքապատկան հողամասն (վկայական N 30062025-08-0007) հարթակի պահպանման ու սպասարկման տարածքի ընդլայնման համար (հետագայում բնակելի տուն կառուցելու նպատակով) ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերի պահանջներին համապատասխան՝ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով: Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և

համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու օգոստոսի 01-ի 52-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, 10/2 հողամաս հասցեում գտնվող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.055096 հեկտար մակերեսով համայնքապատկան 08-015-0066-0085 կադաստրային ծածկագրով հողամասը (վկայական N 30062025-08-0007), հողի կադաստրային արժեքով՝ 78240 (յոթանաստուներե հազար երկու հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Միսակ Շահենի Համբարյանին՝ հարթակի պահպանման ու սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



2025 թվականի օգոստոսի 04
գյուղ Աշոցք